ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 159 - Ա

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱՅԻՆ ԿԻՑ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ 64-ՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝

2026 թվականի մարտի 4-5-ը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիային կից ռիսկերի կառավարման համակարգի զարգացման հարցերով աշխատանքային խմբի 64-րդ նիստի ծրագրով նախատեսված միջոցառումը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպելու և անցկացնելու նպատակով, այդ թվում՝ պաշտոնական ու արարողակարգային միջոցառումների, օտարերկրյա պատվիրակությունների՝ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից դիմավորելու, ճանապարհելու, սննդի, ինչպես նաև միջոցառումների անցկացման համար սրահի վարձակալության, հուշանվերների ձեռքբերման և այլ ծախսերը 1,626,000 (մեկ միլիոն վեց հարյուր քսանվեց հազար) դրամի շրջանակներում կատարել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության

համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած հաշվետվության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

26.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ